

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՀԱՅԱԳԵՏԸ
(Լ. Ս. Խաչիկյանի ծննդյան 60-ամյակի առթիվ)

ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայկական ՍՍՀ ԳԱ իսկական անդամ Լևոն Խաչիկյանի գիտական կենսագրությունն սկսվում է պետական ձեռագրատուն-Մատենադարանում աշխատելու տարիներից: Սովորաբար երիտասարդ գիտնականների առաջին հրապարակումները ներողամտությամբ հայցելու տարր են ունենում, բայց Լ. Խաչիկյանի այսօրվա վաստակի բարձունքից դիտելիս անգամ նրա առաջին հրապարակումները դրա կարիքը չունեն, եթե չասենք՝ այսօր էլ ուսանելի են: Հայագետները (Ղ. Ալիշան, Գ. Խալաթյան) վաղուց գիտեին Վանական վարդապետի «Յաղագս տարեմտին» ճառի գոյությունը մասին, բայց այդ արժեքավոր տոմարական բնագրի գիտական հրատարակությունն ու ամփոփ գնահատությունը վիճակված էր իրականացնել քսաներեքամյա Լ. Խաչիկյանին¹: Նրա բնութագրմամբ «Յաղագս տարեմտին» աշխատությունը «ցայտուն կերպով ցույց է տալիս մեր բանասիրության միայն նեղ շրջաններին հայտնի Վանական վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողությունը»², իսկ այդ երկի գիտական բնագիրը կազմելու, Անանիա Շիրակացու հետ ունեցած աղերսը պարզելու, Արտավազդին վերաբերող առասպելի տարբերակը դնահատելու և ծանոթագրելու հմտությունը, առանց չափազանցության, ցույց էր տալիս մեր բանասիրության նեղ շրջաններին իսկ անհայտ երիտասարդ Լ. Խաչիկյանի «գրչի ուժն ու գիտական կարողությունը»: Եվ առհասարակ, Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը դիսերտացիայի թեզ դարձնելը նշանակում էր, թե Լ. Խաչիկյանը զբաղվելու է մատենագրության պատմության այնպիսի բնագավառներով, որոնք ինչ-ինչ պատճառներով քննության առարկա չեն



¹ «Յաղագս տարեմտին» ի Վանական վարդապետի ասացելը («Գիտական նյութերի ժողովածու», № 1, 1941, էջ 151—169):

² Նույն տեղում, էջ 152:

դարձել և որոնց մատենագրական կարևորությունը կարոտ է բացահայտման։ Անդադրում ու անձանձրույթ ձեռագրեր պրպտող Լ. Խաչիկյանը Մատենադարանի գրչագրերից մեկում (№ 631) սովորական «նախերգանք քարոզից» կոչված գրություններից տարբերեց ու հայագիտության մեջ առաջին անգամ երևան բերեց միջնադարյան նշանավոր վարդապետանոց Գլաձորի համալսարանի սաների ատենախոսությունները, կատարած լինելով Ղ. Ալիշանի երկար ժամանակ անկատար մնացած ցանկությունը³։ Երկրի քաղաքական, կրոնական ու մշակութային պատմության պատկառելի իմացություն պետք էր ունենալ հիշյալ ատենախոսությունների թեթևակի ակնարկումների միջից ժամանակի աշխարհական ու հոգևոր անձանց տեսնելու, անվրեպ հասցեագրելու և նաև բացահայտած հուշարձանները թվագրելու համար։ Լ. Խաչիկյանի «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսությունները» աշխատությունը⁴ այդ ամենի առկայությունն էր վկայում։ Ի դեպ, առաջին հոդված-հրապարակումներից սկսած Լ. Խաչիկյանին բնորոշ է գիտական լայնախոհությունը. նրա աշխատություններում ուրիշների ուշադրությանն առաջարկվող և նոր հետախուզումներ հուշող բազմաթիվ հղումներ ու ցուցումներ կան, որոնք երբեմն հաջողությամբ ընկալված ու գործածված են, իսկ երբեմն էլ՝ դեռ սպասում են ընկալունակ կատարողի։ Հիշյալ հոդվածում, օրինակ, խոսք կա Մխիթար Գոշի «արժեքավոր և ցարդ անհայտ ճառերի ու մեկնությունների» մասին՝ ձեռագրի մատնացուցումով (№ 3276), որոնց ուսումնասիրությունը կամ բողջացներ մատենագրի վաստակը։

Հայագետներ Հ. Մանանդյանն ու Լ. Մելիքսեթ-Քեկը դիտել էին, որ Գիտգենես կաերտացի ստոիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի աշխատությունների շարքում հիշատակում է «Յաղագս բնութեան» խորագրով և հունարեն բնագրով չպահպանված մի երկ, որի հայերեն թարգմանությունն առկա է ձեռագրերում, Լ. Խաչիկյանը պրպտումների մեջ ավելի առաջ է անցնում և հայտնաբերում այդ երկի թարգմանության ընդարձակ խմբագրությունը⁵։ Գիտականի համոզիչ եզրակացմամբ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» և Զենոնի «Յաղագս բնութեան» բնագրերը «թարգմանվել են նույն գործչի կողմից և կամ նրանց թարգմանիչները եղել են ժամանակակիցներ ու թարգմանչական նույն դպրոցի համամիտ ներկայացուցիչներ»⁶։ Հայագետի՝ «Զենոնի «Յաղագս բնութեան» երկի հայերեն թարգմանությունը» ուսումնասիրություն-հրապարակումը մեկ անգամ ևս հավաստեց այն ընդհանուր մշակութային նշանակությունը, որ ունեն միջնադարյան հայկական թարգմանությունները։ Լ. Խաչիկյանն ակնհերև դարձրեց նաև, թե թարգմանական այդ բնագրերը նշանակալի հետք են թողել մեր մատենագրության պատմության մեջ։

Կիրակոս Գանձակեցու «Պատմություն»-ից հայտնի էր, որ Կոստանդին Բարձրաբերդցին «Սահմանք կանոնականք» է հեղինակել և առաջել ըստ

3 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1891, էջ 137։

4 Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. XXIII, 1946, էջ 423—450։

5 «Գիտական նյութերի ժողովածու», № 2, 1950, էջ 65—98։

6 Նույն տեղում, էջ 76։

պատկանելուն, բայց որ դրանից երեք տարի անց՝ 1251 թ., նա վերստին է անդրադարձել այդ խնդիրներին՝ 1249 թ. հայ-վրացական հակամոտորական ապստամբության հետևանքների թելադրանքով, պարզ դարձավ Լեւոնին դրադի գրչագրերից մեկում և. Խաչիկյանի կողմից նույն հեղինակի «Խրատական թուղթ»-ը լույս աշխարհ բերելով⁷: Այդ ոչ ծավալուն բնագիրը, հիւրավի, չլրացնում է հայ պատմագիրներին և իր ուրույն տեղը գրավում մոտորական արշավանքների ու տիրապետության առաջին տասնամյակների ադրուրների շարքում⁸: Հրատարակիչը բացահայտում է կաթողիկոսի խրատների քաղաքական դրդապատճառները, նրանց պատմական, իրավագիտական, ազգագրական և կենցաղագիտական նշանակությունը: Ավելորդ չէ հիշել, որ այս ուսումնասիրության մեջ հստակորեն իմաստավորվեցին պաշտամունքային «բաջախոս» և «լեկրոտ», սովորութեան «խաւարարգել», սոցիալ-կենցաղային «հաղկից» և «խապկից» տերմինները: Լ. Խաչիկյանի աղբյուրագիտական հմտությանն ենք պարտական նաև Թղթի հեղինակային պատկանելությունը որոշելու և միջին հայերենի պատմության նշանակալի մի աղբյուր երևան բերելու համար:

1951 թ. լույս ընծայած մի հոդվածով Լ. Խաչիկյանը նոր էջ բացեց միջնադարյան հայկական քաղաքների ներքին կյանքի ուսումնասիրության մեջ, ձեռքի տակ ունենալով Հովհ. Երզնկացու կազմած (1280 թ.) «Սահման[ը] և կանոնք միաբանութեան եղբարց, որք աստուածային սիրովն միաբանեցան յեղբայրութիւն միմեանց ի մայրաքաղաքս, որ կոչի Երզնկայ» գիտությանն անժանոթ բնագիրը⁹: Մեկ տասնամյակ անց, «Երզնկա քաղաքի «Եղբարց միաբանութեան» կանոնադրությունը (1280 թ.)» խորագրի տակ, նա շրջանառության մեջ դրեց այդ իրոք եզակի և բովանդակալից սկզբնաղբյուրը, համոզված լինելով, որ «այսուհետև ևս այն գրավելու է սևեռուն ուշադրություն»¹⁰:

Ի թիվս այլ հարցերի, Լ. Խաչիկյանն անդրադարձավ կազմակերպության կառուցվածքին, նրա անդամների սոցիալական պատկանելությանը, նպատակներին ու խնդիրներին, նորովի մեկնաբանելով այլ աղբյուրների, այդ թվում և շափածո գործերի, հայրենիների բովանդակած և հաճախ անհասկանալի մնացած տեղեկությունները:

Ակադ. Լ. Խաչիկյանի հրատարակած բնագրերի շարքում առանձնակի կարևորություն ունեցողներից է Գրիգոր Պարթևին վերագրված «Հարցում»-ը¹¹, Այն Եզնիկ Կողբացու հիմնական աղբյուրներից մեկն է, ուստի և գրված է V դ. 40-ական թվականներից ոչ ուշ, և. Աղոնցից հետո և. Խաչիկյանն այդ երկի հետ կապված նոր լուսաբանություններ առաջադրեց: Մասնավորապես՝ նա հստակեց երկի ստեղծման նպատակը. «եկեղեցու ջատագուները ոչ միայն պետք է հիմնավոր տեղեկություններ ունենային դարավոր ավանդույթով ժողովրդի գիտակցության մեջ արմատացած հավատալիքների ու պատկերացումների մասին, այլև պետք է սովորեին քրիստոնեական վար-

7 «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 267—284:

8 Նույն տեղում, էջ 270:

9 ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1951, № 12, էջ 73—84:

10 «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 365—377:

11 Նույն տեղում, № 7, 1964, էջ 301—330:

դապետության դիրքերից դրանք մերժելու ձևերն ու եղանակները»¹²: Տարաբնույթ փաստերի ու դատողությունների լույսի տակ Լ. Խաչիկյանը մեծ հավանականությամբ հետևեցնում է, որ «Եղնիկի աղբյուրը հանդիսացող «Հարցում»-ի հեղինակն ինքը՝ Մաշտոցն է»¹³, ուստի և իրավացիորեն այն կոչում է հայ մատենագրության երախայրիք: Աղբյուրագիտական առումով ուսանելի նորույթներ են սուրբգրական վկայակոչությունների բնութագրությունն ու վահրամ Բարունու քաղումների համագրությունը:

Լ. Խաչիկյանը մեր մատենագրության պատմության ամենահմուտ հետազոտողներից է: Մաշտոցին ու նախամեսրոպյան գրի հարցին նվիրված նրա ոչ ծավալուն ուսումնասիրությունները թե՛ փաստական, թե՛ հետազոտական մեթոդի առումով նոր խոսք են, գրված անկանխակալ ու սրտացավ հեղինակի գրչով: Հմայագրերից նրա քաղած ու բնութագրած տվյալները նորովի հետազոտությունների հեռանկարներ ու ուղիներ են մատնացուցում¹⁴:

Լ. Խաչիկյանը բառացիորեն հայտնագործեց XI դ. հեղինակ Հակոբ Սանահնեցուն և նրա «Ժամանակագրության» հատվածները: Իր փորձին ու վաստակին վայել հմտությամբ նա դրանք զուգահրեց Կոզեմի «Տեսիլք»-ի, Ուհայեցու «Ժամանակագրության» և Տարոնացու «Հակաճառության» համապատասխան դրվագների հետ և պարզեց նրանց աղբյուրագիտական աղբյուր, որով և ուրվագծվեց Հակոբ Սանահնեցու կենսագրությունը, ճշգրտվեցին Հակոբ քահանայի և Հակոբ Սանահնեցու նույնանունությունը, ապրած ժամանակը, հայ-բյուզանդական հարաբերություններում ունեցած դերը և շատ այլ իրողություններ¹⁵: Գրեթե նույնը պետք է ասել Լ. Խաչիկյանի «Մատթեոս Զուղայեցու կյանքն ու մատենագրությունը» աշխատության մասին¹⁶: Լ. Խաչիկյանն առաջինը կազմեց նրա աշխատությունների մատենագիտությունը, բնութագրեց ու գնահատեց դրանք, ի մի հավաքեց մատենագրության մեջ պահպանված մանր ու մեծ տեղեկությունները նրա մասին և գրեց մենագրության արժեք ունեցող հետազոտություն¹⁷:

Տարաբնույթ սկզբնաղբյուրների նախանձելի իմացությունն ու նրանց հաղորդումները վերլուծելու կարողությունը երբեմն-երբեմն «շեղել են» նույնիսկ Լ. Խաչիկյանի հետևողականությունն ունեցող գիտնականին: Այսպես, Հովհ. Նրզնկացու ճառերի ու քարոզների հաղորդած և հարակից տեղեկություններից նա նյութեր է քաղել միջնադարյան հայկական բժշկության վերաբերյալ¹⁸, իսկ երկու տասնամյակ անց՝ միանգամայն նոր փաստական նյութի քննությամբ գրել «Հայ բնագիտական միտքը XIV—XVIII դարերում» աշխատությունը¹⁹: Հովհ. Զուղայեցու «Հաշվետոմարի» հրատարակությամբ և ուսումնասիրությամբ Լ. Խաչիկյանն իր նպաստն է բերելու և մաթեմատիկա-

12 Նույն տեղում, էջ 309:

13 Նույն տեղում, էջ 310:

14 Նույն տեղում, էջ 11—24, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 4, էջ 145—158 և այլուր:

15 «Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 1, էջ 22—48:

16 «Բանբեր Մատենադարանի» № 3, 1956, էջ 57—84:

17 Աշխատության վերջում կան ուշադրավ առաջարկություններ:

18 ՀՄՄԶ ԳԱ «Տեղեկագիր», 1947, № 4, էջ 83—90:

19 «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 23—44, հմմտ. «Հայ ժողովրդի պատմություն», Կ. IV, Երևան, 1972, էջ 470—490:

լի պատմությունը²⁰։ Լ. Խաչիկյանի ընդգրկումն ունեցող Հայագետի համար այդ բոլոր «շեղումները» ուրիշ բան չեն, քան «Հայոց մատենագրության պատմություն»։

Այդ ամենով հանդերձ, ակադ. Լ. Խաչիկյանն ամենից առաջ պատմաբան է, սոցիալական, քաղաքական ու վարչական պատմության խոշորագույն մասնագետներից մեկը Հայաստանում։ Դեռ 1947 թ. հրատարակած «Աղանդավորական գաղափարախոսությունը Հայաստանում» հոդվածով²¹ նա ապացուցեց ավանդական պատմության մեջ այդ քիչ հետազոտված խնդրի կարևորությունը։ Հետագայում նա ցույց տվեց, որ աղանդավորականության տեսքով հանդես եկող սոցիալական շարժումները բնորոշ են մեր ժողովրդի պատմության տարբեր շրջաններին։ Մարքսիզմի դասականների ասույթներն ու գնահատությունները նա ակնհիշ հաջողությամբ կիրառեց Հայաստանի սոցիալական պատմության դրվագները բացահայտելիս ու բնութագրելիս։ Հիշյալ առումով նրա «Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից» մենագրությունը (1951 թ.) անդրանիկ հաջողված փորձ էր, գրված IV դ. վերաբերող հայկական և հունական աղբյուրների պահանջվելիք իմացությամբ։ Պարզվեց, որ դավանական գունավորում ունեցող վաղ քրիստոնեական անցուղարձները՝ սոցիալական շարժման հիմք ու բնույթ ունեին։ Հայազգի նվաստաթիտս եպիսկոպոսի «մոլորությունը», որ առնչան անհանգստություն էր պատճառում բյուզանդական գործիչներին (այդ թվում և Բարսեղ Կեսարացուն) փաստորեն՝ ավատականացող եկեղեցու դեմ ուղղված շարժում էր, ինչպես որ նրա դեմ էր միտված և անապատականության սկզբնավորումը մեղանում։ Ի դեպ, Լ. Խաչիկյանը հաջողությամբ փաստեց նաև Մեծ ու Փոքր Հայքերի ներքին իրավիճակի նուրբականությունը, մանավանդ Արշակավանի բնակեցման պատմության նորովի լուսաբանության առթիվ։ Սրբադրելի տեղիներ ունեցող այդ մենագրությունը այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը։

Իրենց արժարժած խնդիրների կարևորությամբ ու խորությամբ մենագրական աշխատանքի նվաճումներ են բովանդակում միջնադարյան Հայաստանի գյուղական համայնքին²², արհեստագործության վիճակին ու զարգացման աստիճանին²³, տնտեսական գործարքներին²⁴ նվիրված հոդվածները։ Հայագիտության համար նոր են ոչ միայն նրանցում արված եզրակացությունները, այլև քննության առնվող աղբյուրների ընձեռած նյութերը, որոնց լուսաբանումը տասնամյակների տքնություն ու բուրրանվիրություն են պահանջել ձեռագրերի աշխարհը մտած հեղինակից։

Այդ նույն ձեռագրական հուշարձանների անընդմեջ պրպտումների արդյունքներն են ամփոփված Լ. Խաչիկյանի նաև ոչ ձեռագրագիտական աշխատություններում, ինչպիսիք են, օրինակ, «Սյունյաց Օրբելյանների Բուրթլյան ճյուղը» տոհմագրական-տեղագրական ուսումնասիրությունը՝ քաղաքա-

²⁰ Հմմտ. „Armeniaca“, Venise. 1969, էջ 244—252։

²¹ Ն. Մառի անվան կաբինետի «Աշխատություններ», № 2, էջ 181—209։

²² «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 1, էջ 110—134։

²³ ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 3, էջ 29—50։

²⁴ «Բանբեր Մատենադարանի», № 6, 1960, էջ 21—42։

կան ու մշակութային պատմության հարցերը առողջությամբ²⁵, ինչպես նաև ԱՄՆ-ում հայկական իշխանությունը և Մործորի դպրոցը՝ մենագրությունը²⁶, որը պատմա-ազգագրական և մատենագրության պատմության ու կրթության հանցյալի համակողմանի ուսումնասիրության եզակի նմուշ է:

Մենք դիտավորությամբ ընդարձակորեն խոսեցինք և. Խաչիկյանի հոդված-հրատարակում-ուսումնասիրությունների մասին, մինչդեռ հայագիտության լայն շրջանները գիտեն, որ 60-ամյա մեր երախտավորի առավել հաճախ հիշատակվող, գրեթե բոլոր հայագիտական աշխատություններում հղվող ու, ինչպես ասում են, սեղանի գիրք դարձած վաստակները ներկայանում են քառահատուր «Հայերեն ձեռագրերի հիշատակագրանքում» (XIV—XV դդ.), որոնց համար գիտնականն արժանացել է Մաշտոցյան մրցանակի: Մենք ուզեցինք ցույց տալ, որ այդ մրցանակին և ունեցած մյուս պատիվներին և. Խաչիկյան-գիտնականն արժանի է և առանց հարյուրավոր հիշատակարանների ընտրել-վերծանելու, ժամանակագրելու ու գնահատելու, առանց այն ծավալուն շորս հատորների, որ ետպատերազմյան հայագիտության առավել երեկի նվաճումներից են: Չխոսեցինք նաև, բայց առանց դիտավորության, և. Խաչիկյանի դիտակազմակերպչական և խմբագրական գործունեության մասին: Կուզենայինք միայն ասել, թե և. Խաչիկյանի տեղական ու մանրախույզ ուսումնասիրությունների կնիքն առկա է նրա հեղինակակցությամբ ու խմբագրությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության» շորորոգ հատորում, ինչպես որ այդ նույնը շոշափելի է նրա խմբագրությամբ ու ազնիվ հոգացողությամբ լույս տեսած «Բանբեր Մատենադարանի» տասը ծավալուն և օգտակար հատորներում (№ 3—12): Մի խոսքով, ճիշտ է ասված՝ «Թէպէտ և բաժինք շնորհաց են՝ այլ հոգի նոյն է»:

Լ. Խաչիկյանի դիտակազմակերպչական կարողությունները ակնբեր են. նշանակալի շահով տնօրենի հեղինակությամբ է պայմանավորված Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի աճը, այդ հաստատության ճանաչումն ու վաստակը: Պատահական չէ, որ միջնադարյան մատենագրության ու գրապատմության նստաշրջանները հաճախ այստեղ են կայանում, իսկ և. Խաչիկյանի ուսուցչապետության արգասիքները դառնում են ընդհանուր սեփականություն: Դժվար է գտնել հայագիտությամբ և հարակից ճյուղերով լրջորեն պարապող որևէ միջին ու երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, որն իր մասնագիտական հաջողություններով այս կամ այն շահով պարտավորված չլինի և. Խաչիկյանին:

²⁵ Նույն տեղում, № 9, 1969, էջ 173—199:

²⁶ Նույն տեղում, № 11, 1973, էջ 125—210: